Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ 20-ԱՄԵԱՅ ԳՈՅՈՒԹԵԱՆ (1962-1982)

Նոր Ջուղա

1982

37(47:925)
Բ-71

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ 20-ԱՄԵԱՅ ԳՈՅՈՒԹԵԱՆ

# (1962-1982)

Տպարան Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ Վանքի
Նոր Ջուղա
1982

Գրքոյկիս հեղինակի ուսուցչութիւնից հանգըստեան կոչուելու «Մեծարանքի երեկոյ»-ի առիթով, Ն. Ջուղայի Հայ Կանանց Գթութեան Միութիւնից շնորհակալութեամբ ստացել է 10,000 ռիալ, որ յատկացուել է սոյն գրքոյկի տպագրութեան ծախսերին։

## ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՋԵՐՄ ԽՕՍՔ

Տպագրութեան յանձնելով Միութեանս գործունէութեան և գոյութեան 20-ամեայ համառօտ պատմութիւնը, անհրաժեշտ ենք գտնում շնորհակալական մեր ջերմ խօսքն ասելու Վարչութեանս երկար տարիների նախագահ և գրքոյկիս հեղինակ Պրն. Լեւոն Մինասեանին, որ սիրայօժար ձեւով յանձն առաւ գրի առնելու Միութեանս 20-ամեայ համառօտ պատմութիւնը։

Միութիւնս թէև շատ կարճ կեանք է ունեցել, բայց այդուհանդերձ իր ուժերին ներած սահմաններում, աշխատել է իր ծառայութիւնը մատուցել հայ մշակոյթին, որը համառօտ ձեւով ներկայացւում է սոյն գրքոյկով։

Ն. Ջ. ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նոր Ջուղա

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Նոր Ջուղան իր դարաւոր անցեալով, խոշոր ծառայութիւն է մատուցել հայ մշակոյթին, դա լինի գրական-տպագրական, արուեստի ու նկարչական, ինչպէս եւ հոգեւոր ու կրօնական բնագաւառներում,

Նոր Ջուղան ունեցել է եւ ներկայիս էլ ունի մեծ թուով մշակութային, մարզական, բարեսիրական, թատրական եւ արուեստի այլ ճիւղերին պատկանող միութիւններ, որոնք թէեւ յաճախ սունկի պէս բուսնել ու շուտ էլ դադարել են գոյութիւն ունենալուց, բայց եւ ոմանք էլ տասնեակ տարիներ մնացել են հրապարակի վրայ եւ իրենց նպաստը բերել մեր ազգային կրթական եւ մշակութային մարզերից ներս, *)

*) Թէեւ այստեղ տեղը չէ Նոր Ջուղայի միութիւնների մասին խօսելու, բայց հետաքրքրութեան համար բերում ենք դրանց ցանկը, որոնց անունները մինչ այժմ հնարաւորութիւն ենք ունեցել գրաւոր աղբիւրներից ձեռք բերելու.

1. Աբգարեան Աւանդից Բարեգործական Յանձնաժողով 1907
2. Աղքատախնամ Ընկերութիւն 1918
3. Աղքատաց արկեղ 1859
4. Առաջադիմասէր Միութիւն (յետոյ Ահարոնեան) 1921
5. Գաւառական որբանոց եւ հոգեւոր գիշերօթիկ 1905
6. Գեղարուեստասիրաց Միութիւն 1926

«Նոր Ջուղայի Հայ Մշակութային Միութիւն»-ը դրանցից մէկն է, որ թէեւ հազիւ բոլորեց իր գոյութեան քսան տարին, բայց այդուհանդերձ, իր լուման է մուծել այդ միութիւնների անդաստանից ներս եւ իր կարողութեան ու հնարաւորութեան սահմաններում, սատար հանդիսացել մեր ազգային մշակոյթին, իր կազմակերպած ազգային ու գրական ձեռնարկներով՝ թատրոնով, համերգներով, դասախօսութիւններով եւ տօնական ու յոբելենական հանդէսներով։

---

7. Գեղարուեստից Սիրողներ 1960
8. Դասախօս Երկսեռ Միութիւն 1918
9. Թատերական Վարչութիւն 1920
10. Կուլտուրական Միութիւն 1924
11. Կրթական-գրական Ընկերութիւն 1908
12. Կրօնական Միութիւն (աշակերտական) 1957
13. Հայ Ակումբ (բաժնետիրական ընկերութիւն) 1932
14. Հայ Կանանց Գթութեան Միութիւն (նախկ. Կ. Խաչ) 1915
15. Հայ Միաբանութեան «Փունջ» Միութիւն 1923
16. Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւն 1892
17. Հայուհեաց Կրթական Միութիւն 1923
18. Հայ Օգնութեան Միութիւն (Կոմիտէ) (ՀՕԿ) 1925
19. Ճառագայթ Միութիւն 1923
20. Մայրերի Միութիւն 1918
21. Մարզադաշտ-զբօսայգի 1943
22. Մարզական Միութիւն 1939
23. Մարզական Միութիւն 1939
24. Մշակութային Միութիւն 1952
25. Յովսէփ Պօղոսխանեան հիւ. ու. Յանձնախումբ 1908
26. Ն. Ջ. Արանց Բարեգործական Ընկերութիւն 1924
27. Ն. Ջ. Արարատ Մարզա-Մշակութային Միութիւն 1972



Այս գրքոյկը նուիրուած է այդ Միութեան 20-ամեայ գործունէութեանը, ուր ընթերցողը կ՚գտնի նախ Վարչական աշխատանքների համառօտ պատկերը, թուական հերթականութեամբ, ապա դրանց մաս կազմող հանդէս-ձեռնարկների առանձին աշխատանքները։

---

(Նախկին Երիտասարդաց Կենտրոնատեղի)

28. Ն. Ջ. Հայ Երիտասարդաց Մարզիկ «Արծիւ» Միութ. 1942
29. Ն. Ջ. Հայ Երիտասարդաց Մշակութային «Հուր» Միութ. 1954
30. Ն. Ջ. Հայ Մարմնակրթական Միութիւն 1925
31. Ն. Ջ. Հայ Մշակութային Միութիւն 1962
32. Ն. Ջ. Որբանոց - գիշերօթիկ 1907
33. Չարմահալ գաւառի Հայ Հիւանդանոցի Միութիւն 1941
34. Չարմահալ գաւառի Հայ Ուսում. Միութ. (Մանանգ). 1942
35. Սպորտ ակումբ 1937
36. Սուրբ գրական ուսումնական Միութիւն 1948
37. Սովետական Հայաստանի հետ Կուլտուրական կապ պահպանող Ն. Ջ. Հայկական Ընկերութիւն 1941
38. Ստիւարտ Մէմորիալ Կոլլէջի «Վառակ» Միութիւն 1930
39. Րաֆֆի գրադարանի ընկերութիւն (Արշալոյս) 1886
40. Փերիայ Կրթասիրաց Միութիւն 1928
41. Փերիայ Հայ Հիւանդանոցի Միութիւն 1941
42. Փերիա-Չարմահալ գաւառների Հայոց Կրթա-առողջապահական Միութիւն 1943
43. «Քնար» Միութիւն *) 1925

---

*) Մի մասի ցանկը տեսնել Վանքի արխիւի 216. 4 թղթապանակի մէջ։ Տրուած թուականներից ոմանք եղած գրութեանց տարիների թուականներն են եւ ոչ թէ հիմնման։

Թէեւ ըստ հնարաւորին աշխատել ենք գրի առնել համաձայն եղած արձանագրութեանց եւ փաստական տւեալների, բայց նկատի ունենալով արխիւի, յատկապէս առաջին շրջանի, ոչ լրիւ ու կանոնաւոր լինելը, հետեւաբար կարող են լինել մոռացումներ, որոնք կատարւել են անկախ մեր կամքից ու ցանկութիւնից։

Գրքոյկի վերջում տրւում է նաեւ անդամ-անդամուհիների ինչպէս եւ պատանի մարզիկների անւանացանկերը, ըստ հնարաւորին ամբողջական ձեւով, որի կազմումն եւս զերծ չի եղել դժւարութիւնից։

Նոր Ջուղա
2 Յուլիս 1982

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ



## ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆՈՒՄՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

«Նոր Ջուղայի Հայ Մշակութային Միութիւն»-ը հիմնւել է 1962 թւին, նախաձեռնութեամբ Նոր Ջուղայի Ազգային դպրոցների և «Անուշիրւան» (Աւետարանական) դպրոցի ուսուցիչ-ուհիների, գլխաւորութեամբ Արամ Ալլուջեանի։

Նախնական մի շարք աշխատանքներից ու հանդիպումներից յետոյ, առաջին ժողովը գումարւել է 1962 թւի Յունւարի 19-ին, երեկոյեան ժամի 4-ին, Նոր Ջուղայի Ազգային Կենտրոնական դպրոցում, ուր հրաւիրւած 45 հոգուց ներկայ են եղել 31 հոգի։

Առաջին այս ժողովում մտքերի մի շարք փոխանակումներից յետոյ, ընտրւել է 9 հոգուց բաղկացած մի Յանձնախումբ, Միութեան կանոնագրութիւնը մշակելու համար։

Յանձնախմբի կազմը բաղկացած է եղել հետեւեալ անդամներից.

Արամ Ալլուջեան
Թադէոս Թադէոսեան
Զաքարիա Հանանեան
Լեւոն Մինասեան
Տկն. Մաղկուշ Միքայէլեան
Տկն. Էմիկ Յովսէփեան
» Էլմա Օհանեան
Օր. Աննա Գրիգորեան
Օր. Սիրիկ Բաբաեղեան

Կանոնագրութիւն մշակող Յանձնախումբը, շատ կարճ ժամանակամիջոցում մշակում է Միութեան կանոնագրութիւնը և ներկայացնում գալիք ընդհանուր ժողովին ի վաւերացում։

Ստորև առաջ ենք բերում կանոնագրութեան այն մասը, որը վերաբերում է Միութեան նպատակին.

## ՄԻՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է

1. Զարկ տալ և տարածել Հայ Մշակոյթը,
2. Պաշտպանել Հայ երիտասարդութիւնը,
3. Օժանդակել-բարոյապէս և նիւթապէս, Նոր Ջուղայի դպրոցներին,
4. Ծանօթացնել հայ հասարակութեան Իրանի Մշակոյթը,
5. Զբաղուել հրատարակչական գործով։

## ՄԻՋՈՑՆԵՐ

Միութիւնը իր նպատակը իրագործում է հետեւեալ միջոցներով.

1. Կազմակերպում է գրական գեղարուեստական ձեռնարկներ, գրական դասեր, դասախօսութիւններ, ներկայացումներ, ցուցահանդէսներ և մշակութային բնոյթ կրող այլ ձեռնարկներ և կազմակերպում ազգային տօներին նուիրուած հանդէսներ։

2. Կազմակերպում է մարզական խաղեր, մրցումներ և մարզահանդէսներ։

3. Բարոյական աջակցութիւն է ցոյց տալիս հայ մշակոյթի ասպարէզում աշխատողներին։



4. Միութեան նիւթական աղբիւրներն են՝ անդամավճարները, ձեռնարկների եկամուտները, նուիրատուութիւնները և այլն։

## ՎԱՐՉԱԿԱՆ Ա. ՆՍՏԱՇՐՋԱՆ

### 1962 Փետրուարից - 1964 Մայիս

Միութեան վարչական առաջին կազմը ընտրուել է 1962 թ.ի Փետրուար 25-ի Ընդհանուր ժողովում, հետեւեալ անդամներով.

Արամ Ալչուջեան՝ նախագահ
Ջեբեդիա Հանանեան՝ քարտուղար,
Օր. Աննա Գրիգորեան՝ գանձապահ
Տիկ. Էմիկ Յովսէփեան անդամ
 » Էլմիկ Օհանեան »
Թաթուլ Օհանեան »
Ֆրանսուա Աբգարեան »

Սոյն ժողովում ընթերցւում ու վաւերացւում է նաև Միութեան կանոնագրութիւնը։

Վարչական առաջին այս կազմը, իր գործունէութեան ընթացքում ունեցել է մօտ 7 նիստ, գրել ու ստացել է 10-ից աւելի գրութիւններ։

Միութիւնը ունեցել է նաև իր բաժանմունքներն ու ենթավարչութիւնները, ընտրուած բաժանմունքների անդամների կողմից, որոնց կազմերի և գործունէութեան մասին դժբախտաբար լրիւ տեղեկութիւնները պակասում են՝ կանոնաւոր արխիւ պահած չլինելու հետեւանքով։

Այդ բաժանմունքներն ու կազմերն են.

1. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Լեւոն Մինասեան՝ նախագահ
Ջանի Զարգարեան՝ քարտուղար



Տկն. Արմիկ Յովհաննիսեան՝ գանձապահ
Օր. Հրանոյշ Թովմասեան անդամ
Յարութ Տէր Մարտիրոսեան »

2. ԹԱՏԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Արամ Ալչուջեան Վաղօ Մկրտումեան.
Խոսրով Մարգարեան Ռուբիկ Տէրտէրեան
Տկն. Ֆլօր Մկրտումեան Արտուշ Զաքարեան
 » Ծաղկուշ Միքայէլեան
(Վարչական պաշտօնները չյաջողուեց իմանալ)

3. ԵՐԳ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Տկն. Էլմիկ Օհանեան՝ նախագահուհի
Գագիկ Հայրապետեան՝ քարտուղար
Տկն. Էլքիս Նազիրեան՝ գանձապահ
Օր. Քաթրին Գուլվարդեան՝ անդամ
Օր. Սիրիկ Բարսեղեան՝ անդամ

4. ՄԱՐԶԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

. . . . . .
. . . . . .
. . . . . .

5. ՁԵՌԱՐԻԵՍՏԻ ԲԱԱԺՆՄՈՒՆՔ

Տկն. Սոնիկ Կիրակոսեան
Օր. Լորիկ Յովհաննիսեան
Տկն. Արմիկ » (?)
 » Միրիկ Գալստեան (?)

. . . . . . .

## 6. ԳԱՅԱՆԵԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

. . . . . . .

. . . . . . .

. . . . . . .

. . . . . . .

. . . . . . .

Վարչութիւնը իր ժամանակաշրջանում կազմակերպել է մի քանի ձեռնարկներ, ինչպէս Մեսրոպ Մաշտոցի ծննդեան 1600 ամեակը, պատշաճ ու ճոխ ծրագրով, Կենտրոնական դպրոցի սրահում։

Կազմակերպել է մի ընդունելութիւն Միութիւնը ներկայացնելու համար տեղի ազգային մարմիններին, ինչպէս և Միութեան բացման մի հանդէս, ուր ներկայ են եղել շուրջ 350 հոգի։ Այս առթիւ եղած թղթակցութիւնը տեսնել «Ալիք» օրաթերթի 1962 թուի Հոկտեմբեր 8-ի համարում։

Գնել է պարի զգեստներ, ձեռնարկների համար։

Միութեան անդամների թիւը առաջին տարում եղել է 72 հոգի։

## ՎԱՐՉՈՒԹԵԱՆ Բ. ՆՍՏԱՇՐՋԱՆ

### 1964 թ. Մայիսից - 1966 թ. Մարտ

Միութեան երկրորդ նստաշրջանի Կենտրոնական Վարչութիւնը ընտրւել է 1964 թուի Մայիսի 22-ին կայացած ընդհանուր ժողովում, հետեւեալ կազմով.



Արամ Ալչուջեան՝ նախագահ
Լեոն Մինասեան՝ փոխ »
Սայեաղ Բաքումեան՝ քարտուղար
Տկն Ֆլօր Մկրտումեան՝ գանձապահ
Օր. Աննա Գրիգորեան՝ անդամ
Օր. Հրանոյշ Թովմասեան »
Գագիկ Հայրապետեան »

Կարճ ժամանակ յետոյ տեղից բացակայում են Արամ Ալչուջեանն ու Սայեաղ Բաքումեանը, որով նախագահի պաշտօնը ստանձնում է Լեոն Մինասեանը, իսկ քարտուղարինը՝ Օր. Աննա Գրիգորեանը։

Սոյն նստաշրջանի ընտրութեան ընդհանուր ժողովում լուծւած են յայտարարւում բաժանմունքների վարչութիւնները, որոնցից ոմանց գործունէութիւնը լինում է անկանոն և ընդհանրապէս խաչաձեւումներ առաջացնում միմեանց աշխատանքներում։

Վարչութեան միջից որպէս բաժանմունքների պատասխանատուներ ընտրւում են.

1. Թատերական բաժանմունքի պատասխանատու՝ Գագիկ Հայրապետեան.
2. Երաժշտական բաժանմունքի պատասխանատու՝ Օր. Աննա Գրիգորեան.
3. Գրական բաժանմունքի պատասխանատու՝ Արամ Ալչուջեան.
4. Երգչախմբի վարիչ՝ Ռուդոլֆ Գալստեան.

Վարչութիւնը իր նստաշրջանի ընթացքում ցուցաբերում է մեծ եռանդ, կազմակերպում է համերգներ, Միութենական հաւաքոյթներ, պարահանդէս, գա-



«ՈՐԴԵՍՊԱՆ»-Ի ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԸ

Աջից ձախ՝

Կանգնած՝ Մարտիրոս Ցակոբեան (*գծագրիչ*), Լիլիկ Օրդուբէգեան (*Վարվառա Գաւրովնա*), Արմենակ Մկրտումեան (*Կերպիչ*), Ցլոր Մկրտումեան (*Վերա*), Մասիս Մաթեան (*Փետրով*), Անուշ Մինասեան (*Աղախին*)։

Նստած՝ Արտուշ Զաքարեան (*Դատական քննիչ*), Ռուբիկ Տէրտէրեան (*Պարպիկ*)։



2474

ՄԻՈՒԹԵԱՆ 1964-65 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Ձախից աջ՝ Նստած՝ Տիկ. Ցլոր Մկրտումեան, Լեւոն Մինասեան

Օր. Հռանուշ Քալվաճեան

Կանգնած՝ Գագիկ Հայրապետեան եւ Սայեաղ Բարտումեան



դասախօսութիւն, Մշակոյթի օրուայ տօնակատարում և պատմական նկարների ցուցահանդէս։

1964 թւի Օգոստոսին, Տկն. Ելենա Աւետիսեանի պարախումբը, Վարչութեան հրաւէրով, Նոր Ջուղա է գալիս և ունենում է չորս ելոյթ, որոնցից երկուսը կենտրոնական դպրոցի սրահում, իսկ միւս երկուսը՝ «Սէփահան» սինեմայի սրահում։

Նոյն թւի Դեկտեմբեր 27-ին, Հայ Ակումբի սրահում, ղեկավարութեամբ և մասնակցութեամբ Արմենակ Մկրտումեանի բեմադրւել է «Որդեսպանը»։

1965 թւի Դեկտ. 17-ին և 19-ին, Հայ Ակումբի սրահում ղեկավարութեամբ Ռուդոլֆ Գալստեանի կազմակերպւել է երգ ու պարի համերգ, Միութեան «Կարա-Մուրզա» երգչախմբի ելոյթով։



Միութեան Վարչութեան կողմից ծաղկեփունջ է նւիրւում խմբավար Ռ. Գալստեանին եւ նախագահ Արամ Ալչուջեանի կողմից ասւում է շնորհակալական խօսք։





«Կարա-Մուրզա» երգչախումբը 1942-46 թուին

Ունեցել է ողջերթի թէյասեղան 1904 թ. Սեպ. 18-ին Վարչութեան նախագահ Արամ Այչուջեանի տեղիցս մեկնելու առթիւ, ինչպէս և ի պատիւ ու գնահատանք երգչախմբի։

Կազմակերպել է դասախօսութիւն, ինչպէս և իր մասնակցութիւնն է բերել աբբայի գահակալութեան 25-ամեակի հանդիսութեան։

Մինչև 1965 թիւը, Միութիւնն իր Վարչական և ընդհանուր ժողովները գումարում էր Կենտրոնական Գպրոցում, որից յետոյ, Վարչութեան ջանքերով և Ա-կումբի Վարչութեան քաղաքավարութեամբ, յաջողւում է վերնայարկի մի երկու սենեակը վարձել որպէս ժողովատեղի, ուր կազմակերպւում են Միութեան անդամների համար գրական ասուլիսներ և մրցութիւններ, որին իր օժանդակութիւնն է բերում հայր Եղիշէ վրդ. Մանճիկեանը։

Ն. Ջուղայի Մարզական Միութիւնը, արտօնատիրութեամբ Թաթուլ Օհաննեանի, 1964 թուի Դեկտեմբերից, միանում է Մշակութային Միութեան, որպէս նրա մարզական բաժանմունքը, և մասնակցելով Թեհրանի մրցութիւններին, շահում է մեծ թւով շքանշաններ։

Վարչութիւնը գնում է մի դաշնամուր, ինչպէս և սեղան-աթոռներ, փուածք և այլն, պատշաճ ձևով կահաւորելով իր ժողովատեղին։

Վարչութիւնը հիմք է դնում նաև մի գրադարանի, որով և հաւաքւում են որոշ թւով ընթերցանութեան գրքեր, անդամ-ուհիների նուիրատուութիւններով։



Վարչութիւնն իր նստաշրջանում ունեցել է 25 նիստ, գրել է 50 և ստացել 14 գրութիւն։

Անդամների թիւն եղել է 164 հոգի, որոնցից 58 հոգին հեռացել կամ հրաժարուել են, իսկ աւելացել են 47 հոգի, որով անդամների թիւն եղել է 131 հոգի։

## Գ. ՆՍՏԱՇՐՋԱՆ

### 1966 թ. Մարտից - 1967 թ. Ապրիլ

Սոյն նստաշրջանի Վարչութիւնն ընտրուել է 1966 թուի, Մարտի 4-ին, և իր գործունէութիւնը շարունակել է մինչև 1967 թուի Ապրիլ ամիսը։

Վարչական կազմը բաղկացած է եղել 6 հոգուց, ըստ հետևեալ պաշտօնների.

| | |
|---|---|
| Հայր Եղիշէ Մանճիկեան՝ | նախագահ |
| Գագիկ Հայրապետեան՝ | փոխ » |
| Օննիկ » | քարտուղար |
| Դաւիթ Մինասեան | գանձապահ |
| Օր. Անժել » | անդամ |
| Մասիս Մաթեան | » |

Երբ 1966 թուի վերջաւորութեան Վարչութեան նախկին նախագահ Արամ Այչուջեանը վերադառնում է Նոր Ջուղա, հրաւիրւում է որպէս պատւոյ նախագահ մասնակցելու Վարչութեան նիստերին, բայց կարճ ժամանակ յետոյ, 1967 թուի Ապրիլի 2-ին, կնքում է իր մահկանացուն, առ յաւէտ հեռանալով մեզանից։

Վարչութիւնը գործի անցնելով, առաջին հերթին հրաւիրում է Կանոնադրութիւն Վերամշակող մի Յանձ-

նախումբ, յանձինս Հայր Եղիշէ Մանճիկեանի, Թա-
թուլ Օհանեանի, Լեւոն Մինասեանի, Թորոս Մարգար-
եանի և Գագիկ Հայրապետեանի, որոնք մի քանի նիս-
տերի ընթացքում վերամշակում են նախկին կանոնա-
գրքութիւնը և յանձնում Վարչութեան, որ Միութեան
ընդհանուր ժողովում վաւերացնել տալուց յետոյ գոր-
ծադրութեան դնի։

Միութեան «Կարա-Մուրզա» Երգչախումբը, Ղե-
կավարութեամբ Ռուդոլֆ Գալստեանի, ունենում է ե-
լոյթներ, ընկերակցութեամբ Օր. Անժէլ Մինասեանի
դաշնակի։

Սրանից բացի Վարչութիւնն ունեցել է նաև հե-
տևեալ ձեռնարկները։

1966 Թւի Մայիսի 22-ին կազմակերպել է «Կրօ-
նական երեկոյ» Հայ Ակումբում։

1966 Թւի Օգոստոսին, Թեհրանից հրաւիրել է
«Արազ» և «Անուշ» Երգչախմբերին, որոնք ունեցել
են առանձին ելոյթներ։

Մասնակցել է Աստուածաշունչի առաջին տպագրու-
թեան 300-ամեակի յոբելենական հանդէսին։

Մի խումբ սիրողների մասնակցութեամբ ներ-
կայացրել է «Փարիզի ըշմըլիկը»։

Մարզիկներին ուղարկել է Շիրազ, մասնակցելու
տեղում, ինչպէս և Թեհրանում՝ Համահայկական մըր-
ցումներին։ Բոլոր ձեռնարկների մասնակցողների հա-
մար կազմակերպել է թէյասեղաններ։

Մարզիկներին խրախուսելու համար, ամրան ե-
րեք ամիսների ընթացքում, Կարօ Յովսէփեանին վար-
ձել է որպէս մարզադաշտի ղեկավար ու մարզիչ, որը



Յուլիսից-Սեպտեմբեր ամիսներին, ամենայն եռան-
դով տարել է իր ուսերին դրւած աշխատանքները։

Ամրան ամիսներին, սիրողների համար բացել է
ձեռագործի և դաշնամուրի դասընթացքներ, ղեկավա-
րութեամբ տկն. Ֆլօր Մկրտումեանի և Օր. Անժել
Մինասեանի։

Վարչութիւնն իր նստաշրջանում ունեցել է 15
նիստ գրել է . . . և ստացել . . . գրութիւններ։

Անդամների թիւն եղել է 181 հոգի։

## ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ

### 1967 թ. Ապրիլից - 1968 թ. Սեպտեմբեր

Չորրորդ նստաշրջանի Վարչութիւնը ընտրւել է
1967 Թւի Ապրիլի 24-ին, որի կազմը բաղկացած է ե-
ղել հետևեալներից.

| | |
|---|---|
| Հայր Եղիշէ վրդ. Մանճիկեան՝ | նախագահ |
| Գագիկ Հայրապետեան՝ | փոխ › |
| Օր. Սիրիկ Բաբախեան՝ | քարտուղար |
| Մասիս Մաթեան | փոխ › |
| Տկն. Ֆլօր Մկրտումեան | գանձապահ |
| Տկն. Արմիկ Յովհաննիսեան | անդամ |
| › Միրուհի Գալստեան | › |
| Օր. Անժել Մինասեան | › |
| › Լիզա Թաշարեան | › |

Վարչութիւնը իր նստաշրջանում ունեցել է մի
շարք ձեռնարկներ, ինչպէս «Ջան գիւլում»-ի ուրախ
երեկոյ, Համբարձման տօնի առթիւ Իր «Կարա-Մուր-

գա» Երգչախմբով, ղեկավարութեամբ Ռուդոլֆ Գայատեանի և նուագակցութեամբ Օր. Անժել Մինասեանի, մասնակցութիւն է բերել Կանանց Գթութեան և Մայրերի Միութիւնների կողմից «Մայրերի Օր»ուայ առթիւ կազմակերպուած, ինչպէս և Արքայի Թագադրութեան հանդէսներին։

Թեհրանից հրաւիրւում է «Արագ» Երգչախումբը, որ ունենում է երկու ելոյթ, յօգուտ Մշակութային Միութեան և Թեհրանի «Հախնազարեան» դպրոցի?

Մշակութային օրուայ առթիւ ունեցել է յատուկ ձեռնարկ Հայ Ակումբի սրահում, Հոկտեմբեր 13-ին։

Ապրիլ 24-ի առթիւ կազմակերպել է յուշերեկոյ, ճոխ ծրագրով, ուր բանախօսել է Հրանդ Աճէմեանը։

Ռուդոլֆ Գայատեանը զինուորագրման պատճառով հրաժարւում է «Կարա-Մուրզա» Երգչախմբի ղեկավարութիւնից, որը կարճ ժամանակի համար յանձնըւում է Հրանդ Աճէմեանին։ Երգչախումբը Աճէմեանի ղեկավարութեամբ իր մասնակցութիւնն է բերում Մայիս 28-ի տօնակատարութեան, կազմակերպիչ Յանձնախմբի հրաւէրով։

Վերոյիշեալ ձեռնարկներից ու մասնակցութիւններից բացի, ունեցել է նաև ուրախ երեկոյներ, ժամանցներ։ Սոյն ձեռնարկների կազմակերպման և իրաւունքների ստացման խնդրում հովանաւորւել է Ազգային Դպրոցների կողմից։

Վարչութիւնը սոյն նստաշրջանում գումարել է 28 նիստ, ստացել է . . . և գրել . . . գրութիւն։

Անդամների թիւն եղել է 163 հոգի։





ԵՐԵՔ ԽՈՒԼԵՐԻ ԲԵՄԱԴՐՈՒԹԻՒՆԻՑ ՄԻ ՏԵՍԱՐԱՆ
Ձախից աջ՝ Արշաւիր Ղարիբեան, Վանիկ Խաչատրեան, Անահիտ Կիրակոսեան

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ

1968 թ. Սեպտ. - 1969 թ. Հոկտեմբեր

Մշակութային Միութեան հինգերորդ նստաշրջանի Վարչական կազմն ընտրուել է 1968 թուի Սեպտեմբեր 2-ին, հետևեալ անդամներով.

| | |
|---|---|
| Մասիս Մաթեան՝ | նախագահ |
| Գագիկ Հայրապետեան | փոխ » |
| Օր. Սիրք Բարսեղեան | քարտուղար |

Տիկ. Արմիկ Յովհաննիսեան  անդամ
» Միրիկ Գալստեան  »
Օր. Լորիկ Յովհաննիսեան  »
Հերոս Մարտինեան  »

Սոյն կազմին օժանդակելու մտքով, Վարչութեան կողմից հրաւիրւում է Տկն. Ֆլօր Մկրտումեանը, որպէս գանձապահ, իսկ Հայր Եղիշէ Մանճիկեանը՝ պատուոյ նախագահ։

Վարչութիւնը իր նստաշրջանում, պատշաճ հանդէսով տօնում է Մշակոյթի Օրը, ապա կազմակերպում է մի ներկայացում և Մասիս Մաթեանի ղեկավարութեամբ բեմադրւում է «Խուլեր»ը և «Ազգամեան կատակերգութիւն»ը։ Ունենում է նաև ամառունքի երեկոյ 1962 Թ. Մարտի 18-ին, մասնակցութեամբ Մասիս Մաթեանի և Արշաւիր Ղարիբեանի։

Համալսարանի Ուսանողական Միութեան համագործակցութեամբ, Ապրիլ 24-ի առթիւ կազմակերպւում է յուշ երեկոյ, իսկ Մայիս 28-ի հանդէսին, Յանձնախմբի հրաւէրով, իր մասնակցութիւնն է բերում Միութեան երգչախումբը։

Վարչութիւնը Վերոյիշեալ ձեռնարկներից բացի, կազմակերպւում է նաև մի քանի ժամանց-ուրախ երեկոներ և թէյասեղաններ։

Սոյն նստաշրջանում գումարուել է 19 նիստ, գրուել է . . . և ստացուել . . . գրութիւն։

Անդամների թիւն եղել է 166 հոգի։



## ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ
### 1969 թ. Հոկտ. – 1971 թ. Փետրուար

Վարչական սոյն նստաշրջանի կազմն ընտրուել է 1969 Թուի Հոկտեմբեր 10-ին, որի անդամներն ըստ պաշտօնի եղել են հետևեալները.

Տկն. Ֆլօր Մկրտումեան՝  նախագահուհի
Գագիկ Հայրապետեան  փոխ նախագահ
Ծերուկ Օհանեան  քարտուղար
Տկն. Միրիկ Գալստեան  գանձապահ
Տկն. Էմիկ Յովսէփեան  անդամ
Մասիս Մաթեան  »
Աղասի Ադիգեան  »

Սոյն կազմին որպէս անդամներ ընտրւում են նաև Լևոն Մինասեանն ու Սամսոն Առաքելեանը, որոնք հրաժարւում են շուտով։

Վարչութիւնը պետական պահանջի հիման վրայ, յաջողում է Միութեանը պաշտօնապէս արձանագրել տալ պետական տեղեկատուութեան դրասենեակում՝ «ԱՆՋՈՄԱՆԷ ՖԱՐՀԱՆԳԻ ԱՐԱՄԱՆԷ ՋՈՂՖԱ» (Նոր Ջուղայի Հայ Մշակութային Միութիւն) անունով։

«Կարօ-Մուրզա» երգչախմբի ղեկավարութիւնը յանձնւում է Հրանդ Աճէմեանին։

Վարչութիւնը իր նստաշրջանում ունենում է հետևեալ ձեռնարկները.

1970 Թուի Յունուարի վերջերում, պատշաճ հանդէսով տօնում է Կոմիտաս վարդապետի ծննդեան 100-ամեակը, որը նոյնութեամբ կրկնւում է յօդուտ Ազգային Դպրոցների Հոգաբարձութեան։

Փետրուար ամսին համագործակցութեամբ Ազգային Դպրոցների և Անուշիրուան դպրոցի Հոգաբարձութեանց, Փերիոյ Կրթասիրաց Միութեան և Հայ Համալսարանական Միութեան Վարչութիւնների կազմակերպում է մեծ բարերար Գալուստ Գիւլբէնկեանի ծննդեան 100-ամեակի առթիւ մի պատշաճ հանդիսութիւն։

Ընդառաջելով եղած դիմումին, երգչախմբով իր մասնակցութիւնն է բերում Հայաստանի Հանրապետութեան 52-րդ տարեդարձի, Սեւրի Դաշնագրի և Մորդադ 28-ի հանդիսութիւններին։

Պատշաճ ձևով տօնում է Մշակոյթի Օրը, ինչպէս և ունենում է իր տարեկան երգ-երաժշտութեան համերգը, որը կրկնւում է և ելոյթներ ունենում նաև Սպահանի Համալսարանի սրահում։

Երգչախմբի ձեռնարկներին դաշնամուրի ընկերակցութեամբ իրենց մասնակցութիւնն են բերում Տկն. Էլմիկ Օհանեանն ու Օր. Ասիա Ալէքսանդրեանը։

Վարչութիւնը այս նստաշրջանում ունեցել է 9 նիստ, գրել է . . . և ստացել . . . . գրութիւններ։

Անդամների թիւն եղել է 90 հոգի։

## ԵՕԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ

### 1971 թ. Փետրուար - 1973 թ. Մարտ

Վարչական եօթերորդ նստաշրջանի կազմն ընտրուել է 1971 թուի Փետրուար 19-ին, հետևեալ անդամներով.



| | |
|---|---|
| Եղիշէ վրդ. Մանճիկեան՝ | նախագահ |
| Լեւոն Մինասեան | փոխ » |
| Օր. Ժենիկ Պարսամեան | քարտուղար |
| Տկն. Ֆլօր Մկրտումեան | գանձապահ |
| » Հռիփսիկ Ղազարեան | գոյքապահ |
| Գագիկ Հայրապետեան | անդամ |
| Մելիք Թուղավէրդեան | » |

Վարչութիւնը գործի անցնելով, բացի ազգային մի շարք տօներից, ինչպէս Վարդանանց, Ապրիլ 24, Հայ Մշակոյթի Օր և այլն, երկու տարում ևս, յատուկ հանդիսութեամբ տօնել է նաև Միութեան հիմնադրութեան տարեդարձները։

Սրանցից բացի, մի ձեռնարկով ցուցադրում է նաև Սողոմոն Թեհլիրեանի յիշատակին Ֆրեզնոյի մէջ կառուցուած յուշարձանի բացման հանդիսութեան լուսապատկերները։ Հերոսի կեանքը ներկայացնում է Լեւոն Մինասեանը։

Վարչութեան նախաձեռնութեամբ օրւայ առաջնորդ Գարեգին Սրբազանը (այժմ Աթոռակից Կաթողիկոս), ունենում է մի դասախօսութիւն, Նոր Ջուղայի գրչագրերի մասին։

Վարչութեան խնդրանքին ընդառաջելով, Սրբազան հայրը ունենում է նաև մի այլ դասախօսութիւն, նիւթ ունենալով «Ճանաչենք մենք մեզ»։

Վարչութիւնը օգտուելով Բէյրութի «Գասպար Իփէկեան» Թատերախմբի Թեհրան գտնւելուց, հրաւիրում է Նոր Ջուղա, որ ղեկավարութեամբ Ժորժ Սարգսեանի 1971 թ. Նոյ. 26-ին և 27-ին Սինեմա Փար-



«Գասպար Իփէկեան» Թատերախումբը նկարուած թանգարանի առջեւ, կենտրոնում՝ Առաջնորդ Գարեգին Սրբազանը, աջին՝ Ժորժ Սարգսեան,

սինէ սրահում, երկու գիշեր ներկայացնում է Րաֆֆու «Ոսկի աքաղաղը»։

Դարձեալ նոյնանման մի առիթից օգտուելով, Կարօ Մեհեանին Թեհրանից հրաւիրում է Նոր Ջուղա, որ Հայ Ակումբում ունենում է մի դասախօսութիւն, նիւթ ունենալով՝ «Հայ մշակոյթի զարգացումը»։

Բացի վերոյիշեալ առանձին ձեռնարկներից, Միութիւնը իր մասնակցութիւնն է բերում նաև «Ալիք»ի 40-ամեակի առթիւ կազմակերպուած հանդիսութեան, ուր որպէս ներկայացուցիչ մասնակցում է Լեոն Մինասեանը, նոյնպէս նաև Իրանի կայսրութեան հանդէսին, ներկայացուցիչ ունենալով Տկն. Ֆլօր Մկրտումեանին և Գագիկ Հայրապետեանին։

Երիտասարդներին աւելի խանդավառելու և գործօն դարձնելու մտածումով, յանձինս Վահան և Ռազմիկ Վարդևանեանների, և օրիորդներ Ռիթա և Ալլին Մելիքեանների, կեանքի է կոչւում մի մարզական Յանձնախումբ, որոնք մրաջան ձևով լծւում են մարզական աշխատանքների։

Վարչութիւնը կահաւորում է Միութեան ժողովատեղին և մարզիկների համար գնում է անհրաժեշտ զգեստներն ու գնդակները։

Վարչութեան սոյն նստաշրջանում, Առաջնորդ Գարեգին Սրբազանի առաջարկութեամբ և Միութեան հաւանութեամբ ու համագործակցութեամբ, Կուսանաց Վանքի շրջափակի (նախկին Որբանոցի) շէնքում, բացւում է Երիտասարդաց Կենտրոնատեղի, ուր իրենց աշխատանքներն են տանում Միութեան երիտասար-

գաց և մարզական բաժանմունքները, Մելիք Խուդավէրդեանի ղեկավարութեամբ։ Վարչութիւնը սոյն նստաշրջանում գումարել է 35 հերթական և 10 արտակարգ նիստեր, գրել է և ստացել ... գրութիւններ։

Անդամների թիւը, երիտասարդներին չհաշուած, եղել է 45 հոգի։

## ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ

### 1973 թ. Մարտից - 1974 թ. Յունիս

Միութեան ութերորդ նստաշրջանի Վարչութիւնը, նախորդ Վարչութիւնն է, որ վերընտրւում է 1973 թ-ի Մարտ 16-ին, հետեւեալ կազմով.

| | |
|---|---|
| Եղիշէ վրդ. Մանճիկեան՝ | նախագահ |
| Լեւոն Մինասեան՝ | փոխ » |
| Ժենիկ Պարսամեան՝ | քարտուղար |
| Տկն. Ֆլօր Մկրտումեան՝ | գանձապահ |
| Տկն. Հռիփսիմէ Ղազարեան | գոյքապահ |
| Գագիկ Հայրապետեան | անդամ |
| Մելիք Խուդավէրդեան | » |

Վարչութիւնը գործի անցնելով, Թեմական Առաջնորդի առաջարկով, կազմակերպում է Ն. Ս. Օ. Տ. Տ. Խորէն Ա. Վեհափառի գալստեան առթիւ մի գեղարուեստական երեկոյ, Իր մասնակցութիւնն է բերում Վեհափառի ընդունելութեան և այդ առթիւ եղած հանդիսութեան*)։

---

*) Այս առիթի աւելի մանրամասն տեսնել մամուլում եղած թղթակցութեան մէջ. («Ալիք» 1972 թ. Մայիս 17-21)։





Միութեան Վարչական կազմը, Խորէն Ա. Վեհափառի եւ Թեմական Առաջնորդ Գարեգին Արքեպիսկոպոսի հետ 1973 թ.



Մշակութային Միութեան ձեռնարկներից մի տեսարան
(«Ղափամա» պարը)

կազմակերպել է Վարդանանց տօնի առթիւ գեղարուեստական երեկոյ *), իսկ Ապրիլ 24-ի առթիւ՝ պատշաճ յուշահանդէս, մասնակցութեամբ «Կարա-Մուրզա» երգչախմբի, ղեկավարութեամբ Յարութիւն Մանուկեանի։

Մշակոյթի օրուայ առթիւ, Վանքի գրադարանում, կազմակերպել է մամուլի ցուցահանդէս, 1973 թուի Յունիսի 28 և 29-ին։

Սոյն նստաշրջանում Վարչութիւնը արձանագրըւած ունի 5 նիստ, Ապրիլից-Յունիսի ընթացքում։

## ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ

### 1974 թ. Յունիսից - 1977 թ. Մայիս

Սոյն նստաշրջանի Վարչական կազմը ընտրուել է 1974 թ. Յունիսի 24-ին, կայացած ընդհանուր ժողովում, հետևեալ անդամներով.

| | |
|---|---|
| Լևոն Մինասեան՝ | նախագահ |
| Տկն. Սոնիկ Կիրակոսեան | փոխ » |
| » Լորիկ Այւազեան՝ | քարտուղար |
| » Ֆլօր Մկրտումեան՝ | գանձապահ |
| » Հրաչիկ Մկրտչեան՝ | անդամ |
| » Ծաղկուշ Միքայէլեան՝ | » |
| Զաւէն Բաղդանեան՝ | անդամ |

Կարճ ժամանակ յետոյ, երբ Տկն. Լորիկ Այւազեանը յարգելի պատճառով անկարող է լինում ներկայ լինելու ժողովներին, քարտուղարուհու պաշտօնը փո-

*) «Ալիք» 1973 թ. 31 Մարտ։

խանցւում է Տկն. Ֆլօր Մկրտումեանին, գանձապահուհու պաշտօնը՝ Տկն. Հրաչիկ Մկրտչեանին, իսկ անձնափոխանորդ Սարօ Նազարեանը հրաւիրւում է կազմը լրացնելու, որին և յանձնւում է Թատերական բաժնի աշխատանքը, իսկ Զաւէն Բաղդանեանին՝ հանդէսների պատասխանատւութիւնը, որ 1976 թւի Օգոստոսին բացակայում է տեղից։

Վարչութիւնը իր ժամանակաշրջանում կազմակերպել է հանդէսներ, թէյասեղաններ, ներկայացումներ և իր մասնակցութիւնը բերել ազգային և այլ ձեռնարկների։

Հայր Եղիշէ վրդ. Մանճիկեանի տեղից մեկնելու առթիւ, 1974 թւի Յունիսի 6-ին, տրւել է ողջերթի թէյասեղան, նոյն թւի Դեկտ. 19-ին, պատշաճ գեղարւեստական հանդէսով, տօնւել է Յարութիւն քհնյ. Շմաւոնեանի մահւան 150 և հայ առաջին պարբերական մամուլի՝ «Ազդարար»-ի հրատարակման 180-ամեակը, տօնւել է Աւետիս Իսահակեանի ծննդեան 100-ամեակը, Վարդանանց տօնը և Մշակոյթի օրը։

Սարօ Նազարեանի և Լիզա Բաղդանեանի ղեկավարութեամբ բեմադրւել են «Շողոքորթը» (1975 թ. Նոյեմբեր, 7-ին), «Կանացի ցանցառութիւններ» և «Առաջնորդը» (1976 թ. Մայիսի 21-ին) և Յ. Ղազարեանի «Տարած կամ թէ չէ» ծիծաղաշարժ պիէսը (1976 թ. 11 Նոյեմբերին)։

1976 թ. Փետրւարին, Հայ Ակումբի և Երիտասարդաց Կենտրոնի հետ միասին, (որ այլևս անկախ Միութիւն էր դարձել), Գառնիկ Սարգսեանին, որ Թեհ-



րան էր գնում, հրաւիրւում է տեղս ելոյթ ունենալու, որի զուտ արդիւնքը նւիրւում է Բէյրութի Նշան Փալանճեան Ճեմարանին։



Տկն. Էլենա Աւետիսեանը Մշակութային Միութեան Վարչական կազմի հետ

Նոյն թւի Մարտին, Տկն. Էլենա Աւետիսեանի պարախմբին հրաւիրւում է Նոր Ջուղա, ուր ամսի 24-ին և 25-ին, ունենում է ելոյթներ։

Նոյնպէս 1977 թւի Մարտին, Հայ Կանանց Գթութեան Միութեան հետ միասնաբար, Թեհրանից տեղս է հրաւիրւում երգչուհի Ռուզան Բարխուդարեանին, որ ամսի 17-ին և 18-ին ունենում է երգահանդէս։

Գրեթէ բոլոր ձեռնարկներից յետոյ, մասնակցող-



Առաջնորդ Մեսրոպ Ծ. վ. Աշճեանը շնորհակալութիւն է յայտնում Տկն. Նվեա Աւետիսեանին

ների համար կազմակերպում է թէյասեղան և պատուում նուէրներով։

Ձեռնարկներին, ինչպէս անցեալի բոլոր Թեմական առաջնորդները, այնպէս էլ սրանց, հովանաւորում է Թեմական առաջնորդ Հայր Մեսրոպ Ծ. վրդ. Աշճեանը և երբեմն էլ իր խրախուսիչ ու գնահատական խօսքն է ասում։

Նկատի ունենալով որ Ակումբի Վարչութիւնը պահանջում էր ժողովատեղիի սենեակները դատարկել, Թեմական Խորհրդի Թոյլտուութեամբ, Միութեան հաւաքատեղին Ակումբից փոխադրւում է Ս. Ամենափրկիչ Վանքի, Փերիոյ Կրթ. Միութեան յատկացուած սենեակը։

Սոյն նստաշրջանում Վարչութիւնը մի գրութեամբ առաջարկում է Համալսարանի Հայոց լեզուի ճիւղի դասախօսներին ու ուսանողներին անդամագրւելու Միութեան, որով 9 հոգի անդամագրւում են։ Անդամների ընդհանուր թիւն եղել է 28 հոգի։

Վարչութիւնը գումարել է 33 հերթական և 3 արտակարգ նիստեր։ Գրել է 42 և ստացել 23 գրութիւն։

## ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ

### 1977 թ. Մայիսից - 1982 թ. Մարտ

Այս նստաշրջանի Վարչական կազմը ընտրւել է 1977 թւի Մայիսի 25-ին։

Վարչութիւնը վերընտրւել է, որ ունեցել է հետեւեալ կազմը։

Լեւոն Մինասեան՝ Նախագահ

Տկն. Սօնիկ Կիրակոսեան — փոխ նախագահ
Տկն. Ֆլօր Մկրտումեան — քարտուղար
Տկն. Հրաչիկ Մկրտչեան — գանձապահ
» Ծաղկուշ Միքայէլեան — գոյքապահ
Սարօ Նազարեան՝ Թատերական բաժնի պատասխանատու։

Վարչութիւնը սոյն նստաշրջանում ունեցել է հետեւեալ ձեռնարկները.

Երգչուհի Օր. Հերմինէ Երիցեանին հրաւիրել է տեղս, որի երգահանդէսը տեղի է ունեցել 1977 թ. Սեպտ. 9-ին Հայ Ակումբում, կազմակերպել է Թարգմանչաց տօների հանդէսներ։ Տօնակատարել է Վարդանանց փառատօնը 1979 թ. Փետր. 3-ին, որին իր մասնակցութիւնն է բերել Վանքի երգչախումբը, ղեկավարութեամբ Մովսէս Փանոսեանի։

Վերոյիշեալ բոլոր տօնակատարութիւններին խօսել է Լեւոն Մինասեանը։

Վարչութիւնը աշխատանք է տարել իր մասնակցութիւնը բերելու նաեւ պետութեան արւեստից նախարարութեան կողմից տեղում կազմակերպուելիք ազգագրական ցուցահանդէսի աշխատանքներին, որը անկախ իր կամքից չիյաջողել իրականացնել։

Մասնակցել է Հայ Դատի Յանձնախմբի կողմից կազմակերպուած հանդէսին եւ իր լուման նուիրել։ Ներկայ է եղել Ն. Ս. Օ. Տ. Տ. Ներսէս Ա. Վեհափառի տեղս ժամանելու ընդունելութիւններին, ինչպէս եւ Փերիոյ Կրթասիրաց Միութեան 50-ամեակի հանդիսութեան, որին եւս նուիրել է իր լուման եւ առել իր խօսքը։

1977 թուի Սեպտեմբերին դիմել է Պետական Պատ-





ՄԻՈՒԹԵԱՆ 1977 - 1979 ԹՈՒԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԸ
Աջից ձախ նստած՝ Տկն. Ֆլօր Մկրտումեան, Լեւոն Մինասեան, Տկն. Ծաղկուշ Միքայէլեան, կանգնած՝ Տկն. Սօնիկ Կիրակոսեան, Սարօ Նազարեան, Տկն. Հրաչիկ Մկրտչեան.

կան հիմնարկին, սիրուած բանաստեղծ Յովհաննէս Շիրազին Իրան հրաւիրելու համար, որ հակառակ տարուած հետեւողական աշխատանքին, տեղիս պետական յեղաշրջման պատճառով, յաջողութիւն չի ունեցել։

Վարչութեան ժամանակաշրջանը լրացած լինելով, 1979 թուի Դեկտեմբեր 21-ին, հրաւիրում է Ընդհանուր Ժողով, ուր դժբախտաբար ներկայ են լինում հազիւ մէկ-երկու հոգի։

Նկատի ունենալով, որ Նոր Ջուղայում կազմուել էին մի քանի Մշակութային նոր միութիւններ, իրականում Ն. Ջ. Հայ Մշակութային Միութիւնը զրկուել էր իր երիտասարդ անդամներից, իսկ տարիքաւոր անդամ-ուհիներն ևս յոգնածութիւն և անտարբերութիւն էին ցուցաբերում, Վարչութիւնը որոշում է աշխատանքները շարունակել մինչև Միութեան գործունէութեան գրքոյկի տպագրութիւնը, ապա իրեն յայտարարել կազմալուծուած, միանալով «Արարատ» Մարզա-Մշակութային Միութեան, որի Վարչութեան հետ այդ առթիւ արդէն ունեցել էր խառը ժողով։

Վարչութիւնը 1979 թուի Հոկտ. 10-ին կազմակերպել է հանդէս նուիրուած Մշակութային օրւան, Կենտրոնական Դպրոցի սրահում։

Աշխատանք է տարել և նորոգել է Միութեան պետական իրաւունքի արտօնաթուղթը, ինչպէս և վիճակախաղի է դրել երկու սաւցաման։

Իր մասնակցութիւնն է բերել Ապրիլ 24-ի և Մայիս 28-ի ձեռնարկներին, ինչպէս և իր անդամուհի, Օր. Աննա Գրիգորեանի ուսուցչական ասպարէզից հանգստեան կոչուելու առթիւ կազմակերպուած պատուոյ երեկոյին, 1981 թ. Մարտ 6-ին, առնելով նաև իր խօսքը։

Վարչութիւնը որոշում է տպագրութեան յանձնել իր գոյութեան 20-ամեակի գրքոյկը, որը սիրայօժար ձեռով գրի էր առել Վարչութեան նախագահ Լևոն Մինասեանը։

Նկատի ունենալով որ Վարչութեան ունեցած կանխիկ չնչին գումարը, չէր լրացնելու գրքոյկի տպագրութեան ծախսերը, որոշում է վաճառել Միութեան որոշ գոյքերը, ինչպէս և հնարաւոր լինելու դէպքում ստանալ այլ օժանդակութիւններ ևս։

Վարչութիւնը սոյն նստաշրջանում ունեցել է 14 նիստ, գրել է 22 և ստացել 8 գրութիւններ։

## ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԸ

Թէև Վարչական նստաշրջանների գործունէութիւնների նկարագրութիւնների ժամանակ, Միութեան կազմակերպած ձեռնարկների մասին համառօտ ակնարկներ ու անդրադարձումներ եղել են, բայց թւում է թէ այդ անցողակի յիշատակումները չեն կարող ընդհանուր գաղափար տալ այդ աշխատանքների մասին, հետևաբար այստեղ պէտք է աշխատանք բերել դրանց համահաւաք տեղեկութիւնները։

Միութեան կազմակերպած ձեռնարկները կամ դրանց առթիւ գոյութեան կոչուած բաժանմունքները, ունեցել են հետևեալ բաժանումները, որոնք բերում ենք ստորև, այբբենական կարգով.

1. Ազգային և մշակութային տօներ.
2. Գրական ձեռնարկներ.
3. Դասախօսութիւններ.
4. Երգչախմբեր և երգահանդէսներ.
5. Թատերական աշխատանքներ.
6. Հրաւիրուած երգիչ-ուհիներ և երգչախումբ-պարախմբեր.
7. Մարզախմբեր և մարզական աշխատանքներ.
8. Յոբելեաններ.
9. Ցուցահանդէսներ.
10. Մամուլ.



### 1. Ազգային և մշակութային տօներ

Ազգային և մշակութային տօները, ինչպէս Վարդանանց փառատօնը, Ապրիլեան Եղեռնի ոգեկոչումները, Հայ Մշակոյթի Օրը և նման այլ Մշակութային տօները, միշտ եղել են Նոր Ջուղայի Հայ Մշակութային Միութեան առաջնահերթ խնդիրներից, որով և իր կարեաց սահմաններում, միշտ էլ աշխատել է տօնել այդ տօները պատշաճ հանդիսութիւններով։

